



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՍԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՆ

381.6  
2-41 14

# ՀՐԱՀԱՆԳ

1931 թ. ՀԱՅԱՍԹԵՐՈՒՄՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ

06 APR 2010

Երջարձկոմներին, Երջկոլխազմիու  
րյուններին, Երջկոռպմիուրյուննե-  
րին, Մատակարարման սեսուչներին  
այստեղ Երջկոմներին.

1931 թ. հացամթերումները դիմավորում  
ենք ունենալով այդ աշխատանքների ասպարե-  
զում անցյալ տարիների հսկայական փորձ և  
բացառիկ սլայմաններ ներկայումս, այդ կամ-  
պանիան հաջող տանելու համար։ Այս տարի  
արդեն Հայաստանում 25 տոկոս միջակ և չքա-  
վոր տնտեսություններ մտել են կոլեկտիվ  
տնտեսությունների շարքերը, վորագիսի հան-  
գամանքը խոշոր խթան և հանդիսանում մթեր-  
ման պլանների լրիվ կատարման գործում։ Ըն-  
թացիկ կամուանիան իր հերթին պետք է խթան  
հանդիսանա չքավոր միջակային մասսաների  
հացի Փրոնտում անցյալներում կուլտի դեմ  
ունեցած պայքարի փորձի հիման վրա ավելի  
յեխս հուժկու հարված հասցնել կուլտակի և նրա  
բոլոր տեսակի դորձակալների վոտնաձու-  
թյունների դեմ հացի Փրոնտում։

Հացամթերումների բնիքացիկ կամուանի-  
ան հանդիսանալու յե միջոց ավելի ևս ուժե-  
ղացնելու գյուղի սոցիալիստական վերակա-  
ռուցման աշխատանքները, ներգրավելու չքա-  
վոր-միջակային քարանոր մասսաներ կոլխոզ-  
շարժման գործում նշուական տերելու խորհրդային իշ-

ՀՍԽՀ—ССРА

12642 - 57

ԳԵՏԱՐԱՅԻ ՏՊԱՐԱ

Գաղտնաբառ 3755

Դրամ 1968 (Բ)

Տերու 1000



18 MAR 2014

իսանության քաղաքականությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման և համատարած կոլեկտիվացման բազայի վրա կուրակի վորակս դասակարգի վերացման դործում։ Ահա այդ տեսակետով են, վոր կառուցվելու յեմեր վողջ աշխատանքները, ինչպես մթերումների նախապատրաստական, նույնպես և նրանմիջական կիրառման շրջանում։

1931 թ. հացամթերման կամպանիային մասնակցում են Հայաստանի բոլոր շրջանները։

1. Շրջանների բաժանումը։ — Բատ իրենց արտադրական բնույթի շրջանները բաժանվում են յերկու խմբի. առաջին խմբին պատկանում են 18 շրջաններ, վորտեղ կատարվելու յեն կենտրոնացած մթերումները։ Այդ շրջանները հետելյալներն են՝ Աբարան, Ախուա, Աղբարա, Ալլահվերդի, Բասարգեչար, Գորիս, Դուզքյանդ, Դիլիջան, Դարաւազյաղ, Թալին, Կոտայք, Մարտունի, Մոլլա-Գյուղչա, Ղարաբիլսա, Նոր-Բայազետ, Սիսիան, Ստեփանավան և Վեդի։

Եերկրորդ խմբին։ — պատկանում են մնացած ութ սպասողական շրջանները, վորոնք են՝ Աշտարակ, Իջևան, Ղամարլու, Ղափան, Ղուրդուղուի, Մեղրի, Շամշադին և Վաղարշապատ։ Այս ութ շրջաններում մթերումները կատարվելու յեն այն հաշվով, վոր ապրանքային հաց ունեցող սեկտորներից և տեսություններից հացը մթերվի նույն շրջանի

կարիքները բավարարելու համար, այսինքն հացի կարիք ունեցող կոլխոզներին և տեխնիկական կուլտուրաների մշակույթով զբաղվող անհատ, չքավոր ու միջակ տնտեսությունների հացի պահանջը բավարարելու նպատակով։

2. Զեր շրջանի պլանը։ — Յերեւնով գիրեկտիվ մարմինների կողմից Հայաստանին տված պլանից և ի նկատի ունենալով Զեր շրջանի հացահատիկային կուլտուրաների ցանքսի տարածությունը և բատ սեկտորների ու տնտեսությունների հացի ավելցուկը, Զեր շրջանին մրգած և պլան ցորեն ցենտրներ, գարի ցենտրներ, վորից կոլխոզներին՝ ցորեն՝ ցենտրներ, գարի ցենտրներ։

Հիշյալ պլանը հայտնված է Զեր մեր № 535 Հունիսի 17-ի հեռագրով։

3. Շրջանային պլանների բաշխումն ըստ գյուղերի և սեկտորների։ — Շրջաններին տված պլանը, ըստ գյուղերի, սեկտորների և տնտեսությունների բաշխելու համար շրջանիդ կենտրոնում պետք ե հրավիրել լայն ակտիվի և գյուղխորհուրդների նախագահների խորհրդակցություն, վորին պետք ե մասնակցեն Շրջկոմը, կենտրոնից հասուկ այդ նպատակի համար գործողված ընկերը և մթերող կազմակերպությունների ներկայացուցիչները։

Այդ խորհրդակցության ժամանակ պետք ե քննության առնել տրված պլանի բաշխումն ըստ գյուղերի և սեկտորների, այն հիմնական

սկզբունքով, վոր պլանի իրագործման ծանրությունը դրվի այն գյուղերի և գյուղերում այն սեկտորների վրա, վորոնց մոտ ոպասվում է հացի ապրանքային յելույթ։ Պետք ե խուսափել պլանը մեքենայորեն ըստ գյուղերի և սեկտորների բաշխելուց։ Հատկապես պետք ե ուռչադրություն դարձնել կոլխոզների վրա մթերման պլան տալով այն՝ կոլխոզներին միայն, վորոնք իրոք հացի ավելցուկ ունեն։

Յենելով անցյալ տարվա փորձից, յերբ տեխնիկական կուլտուրաների շրջաններում առանց ի նկատի ունենալու, թե կոլխոզները ավելցուկ հաց ունեն թե վոչ, մթերում ելին կատարում նրանցից ի հաշիվ նրանց սպառողական նորմաների, սպառողական ութ շրջաններում կոլխոզներին մթերման պլան չի տրված, սակայն յեթե տեղերում գտնեն, վոր վորեվեմի կոլխոզ ապրանքային հաց ունի, ավելցուկի սահմաններում այլպիսի կոլխոզներին պետք է տալ պլան և այդ մասին անմիջապես հայտնել մթերող մարմիններին պատճենը Մոտժողկոմատին մինչև հունիսի 30-ը։

Ակտիվի խորհրդակցության ժամանակ պետք ե քննել պլանների կատարման ժամկետները սոցմքցման հրավիրելով Հայստանի այլ շրջաններին պլանները լրիվ և ժամանակին կատարելու և գերակատարելու համար։

4. Կուլյակ և ուռնեցած տնտեսություններին տրվելիք պլանը։— Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր կենտրոնում պլանները

կազմելիս ձեռքի տակ չեն յեկել Նշութիս թվուր, բայց ըջանների կուլյակ և ուռնեցած տնտեսությունների թվի, նրանց ընտանիքի անդամների և փաստացի կասարած ցանքսի տարածության մասին, նրանց համար Զեղ վորոշ պլան չե տրված։

Յելենելով նրանից ցանքսի տարածությունից, բերքի չափից, պետք ե վորոշել այդ տնտեսությունների պլանը այն հոչվով, վոր նրանց համար թողնվի միայն տարեկան ուտելիքը, ամեն մի անդամին հաշվելով 1,66 ցենտներ (10 փութ) և 1931—32 թ. ցանքսի համար սերմացու։ Սպառողական շրջանների այն գյուղերում, ուր գերակշռում են տեխնիկական կուլտուրաների մշակույթները և առաջիկա տարում կուլյակ և ուռնեցած տնտեսությունները պետք ե ցանեն տեխնիկական կուլյառաներ, այդ տնտեսությունների համար սերմացու չըպետք ե թողնել։

Կուլյակ և ունեվոր տնտեսությունների պլանները գյուղում կազմելուց և հաստատելուց հետո անմիջապես հայտնվում է շրջանի կենտրոնին, վորտեղ բոլոր գյուղերից ստացված տեղեկությունները ամփոփելուց հետո հեռագրով հայտնում են մթերող մարմիններին պլատմենը Մատժողկոմատին վոչ ուշ քան հունիսի 30-ը։ Այդ պլանները կենտրոնից հաստատվելուց հետո միայն մտնում են իրենց ուժի մեջ և դրանց հիման վրա արգում են կայուն պարտադրություններ։

Այն գյուղերում, ուր կուլակ և ուռճացած տնտեսությունների ցանում են ցորեն և գարի, նրանցից կայուն պարտագրություններով պետք է զանձել միայն ցորեն, թե դարու և թե ցորենի փոխարեն:

Բոլոր շրջաններում կուլակ և ուռճացած տնտեսություններից զանձած հացահատիկի քանակը պետք է նրանց ցանքսի յուրաքանչյուր հեկտարին 3 ցենտներից պակաս չլինի:

Այն կուլակ և ուռճացած տնտեսությունները, վորոնք չեն իրագործել իրենց տրված ցանքսի կայուն պարտագրությունները, նրանցից հացը պետք է գնձել կայուն պարտագրությունների հաշվով, առանց ի նկատի ունենալու, թե վորքան և մնում ուտելիքի և սերմացուի համար:

Կուլակ և ունելով տնտեսություններից հացը պետք է զանձել անմիջապես հացահատիկը կամելուց հետո: Կայուն պարտագրություններով հացահատիկը համձնելու համար նրանց տրվում է վորոշ և կարճ ժամանակ: Յեթե վորոշված ժամկետից մինչև 3 որ նրանք չեն հանձնում, պետք է հացը դրավել և տուգանել չհանձնված քանակի արժեքի 5-ապատիկի չափով:

5. Պլանների գյուղ, կոլխոզ և կուլակ ունեվորների դուռ հասցնելը.— Շրջանային լայն ակտիվի խորհրդականությունից հետո յուրաքանչյուր 2-3 գյուղի պետք է կցել մի ակտիվ ընկերոջ, պլանները գյուղ հացնելու, բա-

ցատրական կամպնիան տանելու համար: Հեշյալ ընկերոջ պետք է պատասխանատու համարել նաև պլանների ժամանակին և լրիվ իրագործման համար:

Գյուղերին կցված ակտիվ ընկերները խորհրդակցությունից անմիջապես հետո պետք է մեկնեն գյուղ և այնտեղ կազմակերպեն ոժանդակ հանձնաժողովներ գյուղխորհների նախագահությամբ: և անդամակցությամբ շրջանի կենտրոնից գործուղված ընկերոջ կոլխոզի և արտադրաբական ընկերության նախագահների և շրջմիության լիազորի, վորոնք նախօրոք պետք է գյուղի պլանը բաշխեն ըստ սեկտորների և վորոշեն կուլակ և ունելոր տնտեսություններին տրվելիք կայուն պարտագրությունների պլանը և քանակը ըստ տնտեսությունների և հաշվի առնեն կոնսորակտացիայի պայմանագրերով՝ մթերվելիք հացի քանակը:

Այնուհետեւ հրամիրելով գյուղի կուսակցական և կոմյերիտական թիջների խորհրդակցություն, պետք է կազմել կամպանիան տանելու ծրագիրը և քննել գյուղի պլանը ըստ սեկտորների:

Ապա պետք է հրավիրել գյուղի ակտիվից, բարբակներից, չքավորներից և կոլխոզնիկներից կազմված խորհրդականություն քննելու և հաստատելու կատարված աշխատանքը:

Կոլխոզների պլանը վերջնականապես հաստատելու համար հրամիրվում է կոլխոզի ան-

դամներից կազմված ժողով, վորը քննում է և  
հաստատում է կոլխոզին տված պլանը:

Այս նախապատրաստական տշխատանք-ներից հետո հրապիրվում է գյուղի համայնական ժողով մասնակցությամբ վերոհիշյալների և միջակների գյուղի պլանը և նրա իրագործման միջոցները վերջնականապես քննելու և հաստատելու:

6. Հացամթերման մերոդները. — Գյուղի համայնական ժողովում պետք է տարվի լայն բացառական կամպանիա հացամթերման նըշանակության և գյուղացիության դեպի կուսակցությունը և կառավարությունը ունեցած պարտականության մասին: Նույն ժողովում պետք է կազմակերպել և անցկացնել գյուղացիության ինքնապարտավորման գործը, վորը ամենաեյականն է: Յուրաքանչյուր տնտեսությունը, վորը կոնտրակացիայի պայմանագիր չենքել, պետք է հայտնի և պարտականություն վերցնի, թե ինչ քանակով նա պետք է մասնակցի հացամթերման կամպանիային տալով իր հացի աղբանքային ամբողջ յելույթը, նշանակելով հացը հանձնելու ժամկետը: Լայն չափով պետք է կիրառել սոցմրցությունը և հարվածայնությունը գյուղի տնտեսությունների մեջ, միտքամանակ մրցության հրավիրելով հարեւան գյուղերին իրենց պլանը լրիվ և ժամանակին կատարելու և գերակատարելու համար: Միաժամանակ պետք է քննության առնել թույլ տնտեսությունների ցանքար հա-

վաքելու և կալսելու խնդիրները, կազմելով քրիպտաներ բուկսիրի վերցնելու թույլերին:

Գյուղի համայնական ժողովում պետք է քննելով և հաստատվի կուրակ և ուռճացած տընտեսություններին արվելիք կայուն պարտագրությունների չափը և դրանց կատարման ժամկետները: Կենտրոնի կողմից կայուն պարտագրությունների պլանը հաստատվելուց հետո գյուղապարհուրդները անմիջապես պետք է չիշյալ տնտեսություններին հանձնեն պարտագրությունները, վորոնց մեջ պետք է հիշատակված լինեն յուրաքանչյուր տնտեսության հանձնելիք բերքի քանակը և հանձնելու ժամկետը:

Գյուղհամայնքի ժողովի բոլոր վորոշութները պետք է արձանագրվեն և այդպիսիները պարտադիր են համայնքի բոլոր անդամների համար:

Այն բոլոր տնտեսությունների նկատմամբ, վորոնք ապագայում կթերանան ինքնապարտավորման կարգով իրենց վրա վերցրած պարտականությունների կատարման մեջ, գյուղի համայնքը պետք է գործադրի հասրակական պարսավանք, իսկ չարամտորեն իրենց պարտականություններից խուսափողներին պետք է զրկել նույնիսկ արդյունաբերական և պարենային ապրանքների մատակարարումից:

Գյուղում ամենախիստ պայմանը պետք է մղել հացի սպեկուլիացիայի գեմ: Նման նպատակով զնված հացը պետք է գրավիլ և հանձնել մոտակա մթերման կայանը:

Լայն կերպով պետք եւ հացահանգել բոլոր գյուղխորհուրդներին վորեվե մեկին հաց գնելու համար իրավունք եւ վկայական չտալ, հացամթերման բոլոր ժամանակաշրջանում:

7. Մթերադ մարմիններ.— կենտրոնական մթերման 18 շրջաններում հացամթերումները կատարվելու յեն Հացանասնական միության դժով, իսկ սպառողական ութ շրջաններում — Այդպինկոսովի դժով:

8. Մթերումների սկիզբը և վերջնական ժամկետը.— Մթերումները պետք եւ սկսել անմիջապես կալանակու տշխատանքների հետ միատեղ և բոլոր շրջաններում պետք եւ վերջնանան հոկտեմբեր 1-ին, բացառությամբ դաշտային շրջանների, վորտեղ պլանները պետք եւ վերջնականապես կատարվեն առ 16-ը ողոստոսի:

Հատկապես պետք եւ ուշադրություն դարձնել կուլակ և ուռմացած տնտեսություններին արված կայուն առաջադրությունների կատարելու վրա. այդ տնտեսություններից պետք եւ հացահատիկը դանձել կալի դիխին, առաջին հերթին: Առհասարակ պետք եւ աշխատել, վորբոլոր սեկտորները իրենց պլանը կատարեն նախքան հացահատիկը շահմաքանները տանելը, վորտեղ միայն հնարավոր կլինի պլանների ժամանակին կատարումը:

9. Կոնտիգիա—վորակ.— Այս տարի հացահատիկը պետք եւ ընդունել համաձայն Համամիութենական դիրեկտիվ որդանների վորոշած կոնտիգիայի (վորակի): Վորակը վորոշե-

լու յեւ հատուել գործիքներսի — պուրկաներով, վորոնցից պետք եւ լինեն բոլոր մթերման կայաններում: Սովորական վորակից բարձր հացահատիկի համար արժեքից ավելի տրվելու յեւ հետեւյալ տոկոս (բոնիֆիկացիա), իսկ պակաս վորակի հացահատիկի համար արժեքից վորոշ տոկոս պետք եւ պակասեցվի (ռեֆակցիա):

Բոնիֆիկացիայի և ռեֆակցիայի տոկոսների մասին մանրամասն ցուցակներ կլինեն կախված բոլոր մթերման կայաններում և հասարակական հիմնարկություններում: Ի գետություն գյուղացիության:

Վճռականապես պետք եւ վերջ տալ վոչ մաքուր վորակի հաց հանձնելուն: Սպառողական շրջաններում հացահատիկը հանձնելուց առաջ պետք եւ անցկացնել քամհարներից և տրիերներից: Հանձնողը հացը ինքը պետք եւ մաքրի, իսկ վործիքները պետք եւ տրամադրեն մթերող մարմինները:

10. Հացահատիկի ամբարելը ըստ տեսակների:— Հացահատիկը պետք եւ ստացվի և ամբարվի ըստ տեսակի: Զանազան տեսակի հացահատիկները չպետք եւ խառնել իրար, մանավանդ աշնանացանը դարնանացանի հետ: Աշնանացանի շրջաններում առջին հերթին պետք եւ մթերել աշնան ցորենը և տեղափոխել այլ շրջաններ սերմացուի համար, համաձայն Սայուղիերի տված նարյագների:

11. Մթերման կայաններ:— Զեր շրջանը

պետք ե ունենա մթերման կայան։ Շըր-  
ջանդ գործուզզված ընկերոջ և մթերող՝ մար-  
մինների ներկայացուցչի հետ պետք ե քննել  
մթերման կայանների տեղերը ի նկատի ունե-  
նալով հետեւյալ պայմանները։ ա) Մթերման  
կետերը պետք ե ըստ հնարավորության թե հե-  
ռավորության և թե ճանապարհների հեշտու-  
թյան տեսակետից հարմար լինեն նրան կցված  
գյուղերի համար։

բ) Պետք ե խուսափել հակընթաց (վստրեշ-  
նոյ) տեղափոխություններից։

գ) Մթերման կայանները պետք ե ունենան  
հարկավոր քանակի տարողության չոր և ան-  
վրտանդ պահեստներ։

Մթերման կետերը վորոշելուց անմիջա-  
պես հետո այդ մասին պետք ե հայտնել մթե-  
րող մարմիններին և մեզ։

Պետք ե անմիջապես միջոցներ ձեռք առնել  
պահեստները վերանորոգելու և ախտահանե-  
լու, հաց փչանալու վտանգից ապահովելու  
համար։

12. Մթերման կայանների կահավորու-  
մը։— Բոլոր մթերման կետերը պետք ե ունե-  
նան կշեռքներ։ Հին կշեռքները պետք ե ճշար-  
գած լինեն Զափի և Կշեռքի Պալատի կողմից,  
պետք ե ունենան պուրկաններ, հացահատիկի  
վորակը վորոշելու, իսկ սպառողական շրջան-  
ներում տրիերներ կամ քամհարներ։ Անհրա-  
ժեշտ ե նաև չչուպներ և ջերմաչափեր հացա-

հատիկի նմուշը ուզած ժամանակի վերցնելու և  
ջերմությունը իմանալու համար։

Բոլոր պահեստներում ձեռքի տակ աչքի  
ընկնող տեղում պետք ե կախված լինեն հրա-  
շեջներ (ոգնեառուշիտել)։

13. Մեշոկները։— Մթերման բոլոր կա-  
յանները պետք ե ապահովված լինեն հարկա-  
վոր քանակի մեշոկներով, վորոնք պետք ե ծակ  
չլինեն։ Պետք ե հետեւյել և ամեն կերպ աշխա-  
տել, վոր մեշոկները արագ և ավելի մեծ շրջա-  
նառություն ունենան, վոչ պակաս քան 6 ան-  
գամ և միաժամանակ չփչացվեն, վորովհետեւ  
ներկայումս մեշոկների մեծ կարիք ե զգաց-  
վում։

Ամեն կերպ պետք ե աշխատել, վորտեղ  
հնարավոր ե հացահատիկը առանց մեշոկի  
պահելու և ստացված մեշոկները անմիջապես  
դատարկելու և վերադարձնելու։

Պետք ե հավաքել կոռապերտիկ առելարա-  
կան կամ պետական բոլոր հիմնարկներում  
գտնվող դատարկ մեշոկները և հետեւյել, վոր  
դրանք կողմնակի նպատակերի չծառայեցվեն։  
Բոլոր ծակված մեշոկները անմիջապես պետք  
ե տեղում կարկատել տալ։

Մինչև մթերման կայանները հացահատի-  
կը հանձնողները պետք ե տեղափոխեն իրենց  
չվալներով կամ մեշոկներով։

14. Հացահատիկի տեղափոխությունը։—  
Մթերման հացահատիկը արագությամբ կեն-  
տրոնական պահեստները տեղափոխելու և փո-

խաղըության ավելորդ ծախքերից խուսափելու նպատակով պետք է միջոցներ ձեռք առնել՝

ա) Վոր կուլակ ունեվորներն իրենց հացը տանեն և հանձնեն մոտակա կայարանը կամ նավահանգիստը և կամ Սայուզիսլերի պահեստը իրենց միջոցներով և մեջոկներով։

բ) Բոլոր կոլխոզները իրենց հանձնելիք հացը պետք է փոխադրեն սեփական միջոցներով և հանձնեն վերոհիշյալ կետերում։

գ) Հացը հեռվոր գյուղերից մթերման կայան հասցնելու և հանձնելու համար պետք է ամեն տեղ լայն կերպով կազմակերպել կարմիր արող։

դ) Մթերման կետերից հացը կայարան, նավահանգիստ կամ Սայուզիսլերի պահեստները տեղափոխելու համար պետք է կաղմակերպել պարտադիր փոխադրություն պետական կայուն գներով առաջի հերթին ոգտագործելով կուլակ և ունեվոր տնտեսությունների փոխադրական միջոցները։

յի) Հացը մթերման կայաններում յերկար չպետք է պահել և անմիջապես պետք է ուղարկել Սայուզիսլերի պահեստները։

15. Մթերման գները. — Առանձին ցուցակով էլեկտրում է սրան։

16. Հաշվառումն և տեղեկանքը. — Հացամթերման ընթացքը ճիշտ և ժամանակին հաշվի առնելու և ճեղքածքները փակելու համար պետք յեղած միջոցները ձեռք առնելու նպատակով պետք է ամենակտրուկ միջոցների գե-

մել մթերման արդյունքները ըստ տեսակների և սեկտորների հեռագրական հնդորյակներով հայտնելու մթերող մարմիններին, անպայման հնդորյակի հաջորդ որը։ Այս նպատակի համար պետք է առաջուց հրահանգել և կազմակերպել, վոր հնդորյակի վերջին գյուղխորհուրդներից ստացվեն հարկավոր տվյալները։ Հենց սկզբից այս կարեվոր գործը հարկավոր հիմունքների վրա դնելու նպատակով, պետք է խիստ պատասխանառվության յենթարկել թերացողներին։ Զեր ապարատից հատուկ մեկին պետք է հանձնարարել տեղեկանքները Ժամանակին հեռագրելու պարտականությունը և նըրանից ել պահանջել ճիշտ և անշեղ կատարումը։

Վորպեսզի պլանների կատարման կոնտրոլ հետանա, հացամթերման սկզբից մինչև հոկտեմբերի 1-ը հաշվելով ամբողջ պլանը բաժանել հնդորյակների և գյուղերին տալ կայուն հնդորյա պլաններ, հետեւելով դրանց ճշգրիտ և լրիվ կատարմանը։ Ամբողջ տարեկան պլանի 60 տոկոսը պետք է տալ ողոստոս ամսին, իսկ մնացածը հուլիս և սեպտեմբեր ամսիններին, ըստ շրջանների պայմանների։ Հնդորյա պլաններն ըստ ամսինների պետք է հայտնել մեզ։

17. Կոնտրակտացիայի պայմանագրերով հացի գանձումը. — Պետք է ամենալուրջ ուշագրությունը դարձնել կանոնադրացիայի պայմանագրերի իրադարձությունները, մթերող մարմինները, թե կենսպոտաֆե մետեղերում պետք է

Հաշվի առնեն կոնտրակտացիայի պայմանագրերի կատարումը և այդ մասին բարբերաբար հայտնեն մթերող կենտրոններին:

Յուրաքանչյուր հեկտար կոնտրակտացիայի յենթարկված ցանքսից պետք է գանձել 1-1 և կես ցենտներ գարնանացանից, իսկ աշնանացանը ըստ պայմանագրերի:

Այն բոլոր կոնտրակտանուները, վորոնք կը խուսափեն իրենց պայմանագրերի լրիվ կատարելուց, պետք է յենթարկվեն դատական պատասխանատվության: Այդպիսիների նկատմամբ պետք է կազմակերպել ցուցադրական դատեր:

18. Մքերված հացի բաշխումը.— Խստիվ արգելվում է մթերված հաջը առանց կենտրոնի նարիազների և թույլատվության տեղերում բաշխելը, ինի դա շրջործկոմի և կտոր այլ կազմակերպության հրահանդով: Կենտրոնացած մթերման շրջաններում մթերված հացի վերաբերմամբ կարգադրություններ անելու իրավունքը վերապահվում է բացառապես Սայուզի բարեկարգություններին, իսկ սպառողական 3 շրջաններում — Մատժողկոմատին: Սույն կարգի խախտման համար պատասխանատու յե, թե կարգադրողը և թե կատարող անձը:

19. Սերմվարկի գանձման պլանը.— Սրան կից ուղարկվում է 1930—31 թ. բաշխված սերմվարկի գանձման պլանը, ըստ շրջանների, վորը յենթակա յե մթերման հացամթերման համար վորոշված կարգով:

20. Կոլխոզների հացի և կերի բալանսը.— Կուաջարկվում է սույնը ստանսալուն պես հրահանգել շրջանիդ բոլոր կոլխոզներին 10 որվա ընթացքում կազմելու իրենց հացի և կերի բալանսը և ուղարկելու կոլխոզկենտրոնին, վորը ամփոփելով այդ տեղեկությունները պետք է ներկայացնի մեզ:

21. Պլանների ստուգատեսը.— Հացամթերման պլանների կատարման ընթացքի ստուգատեսը հեշտացնելու նպասակով առաջարկվում է մատակարարման տեսուչներին շրջգործկոմների շենքում, աչքի ընկնաղ տեղում, պատից կախել շրջանի գյուղերի պլանների և դրանց կատարումը ըստ հնդորյակների:

Վերջացնելով հացամթերման կամպանիայի հետ կապված գլխավոր խնդիրների վերաբերմամբ ցուցմունքները, անհրաժեշտ ենք համարում կրկին անգամ շեշտելու, վոր մթերում ների ժամանակին կատարելու և գերակատարելու կախված ե գործը նախորոք կանոնավոր կազմակերպելուց, լայն բացատրական կամպանիա տանելուց, ամեն մի այդ ասպարիգում աշխատողի գերը և պարտականությունը որ առաջ վորոշելուց և գործի կատարման կանոնավոր վերահսկողությունից, կոնտրոլից: Նախատեսնելով գործի բոլոր մանրամասնությունները, նկատի ունենալով անցյալի փորձը, ցուցադրելով բոլշեվիկյան յեռանդ և կամք, մեզ կհաջողվի հացամթերման Յ-րդ կամպանիան Հայաստանում ժամանակակից առաջարարան



NL0226505

55.099

տարել և դերակատարել համաձայն՝ կուսակցության և կառավության տված հրահանգների:

Մատակարարման ժողկոմ՝ վ. ՄԵԼՔՈՒՄՑԱՆ

Կոլխոզի ենտրոնի նախագահ՝ ձ. ՍԻԼԱՆՅԱՆ  
Հացանասնապահ միության վարչ. նախագահ՝  
Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Այդպին կոռպի վարչ. նախագահ՝  
ձ. ՂԲՆԱԴՐՅԱՆ

